



Ա.ՂԱՏ ԽՕՍԻՔ

ՀԱՐԱՐ 13 ՀՈԿՏ . 1906 . ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ԳՊՐՈՅԻՆ ՇՈՒՐՁԸ

Ալեքսանդրիոյ Պօլոսեան վարժարանը բա՞ց է թէ գոց:

- Բաց է, կը պատասխանէ Սմբատ Բիւրատ, վարժարանի տեսչարանը նստած՝ առտուընէ մինչև երիկուն:

- Գոց է. կըսէ դպրոցական յանձնախումբը Բիրամիտի սրճարանէն:

Ձեռնհաս իշխանութիւնը ներկայացնող մեր Առաջնորդը ի՞նչ կընէ:

- Փորս կը ցաւի, կազազակէ Գահիրէէն ու օրը էրեք անգամ քէթէն թօհումի լափա կը փոխէ:

Վսեմ. կառավարիչը ի՞նչ կըսէ:

- Դպրոցը բացէ՛ք բայց կօիւ չելլայ կը խըրատէ մէկ կողմին, դպրոցը գոցեցէ՛ք բայց կըրօիւ չըլլայ, խորհուրդ կուտայ միւս կողմին:

- Հէր քէչ իշինէ պարսըն, կը հրամայէ վը-

սեմ. Բարթող փաշան:

Ու այդ միջոցին դպրոցին տղաքը պիլիա կը խաղան, դասատուները՝ թավրու եւ տնտեսները՝ բրէֆա:

Եւ վարժարանի պաշտօնեաներու ամսականները կը շարունակեն բանիլ, անխոնջ, անընդհատ, անձնանուէր զոհաբերութեամբ մը. արի՛ ամսականներ, միակ բանող բաները ամբողջ այդ անշարիութեան մէջ:

Ահա՛ իրաց կացութիւնը ձեռագիրս տպարանին յանձնուած պահուն, այսինքն հինգշաբթի առաւօտ ժամը ծին, և վստահ եղիք որ կացութիւնը նոյնը պիտի մնայ վաղն ալ, ամիս մը ետքն, տարի մը վերն ալ:

Եւ ամսականները պիտի շարունակեն բանի՛լ, բանի՛լ, բանի՛լ:



Փ Ո Ր Ա Ն Յ

ԱՂԱԿՆՈՒՆԻ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ԾԱՆՐԱՊԷՍ ՀԻՒԱՆԵՐ

ԲԱՐԻՉԷՆ ԲԺԻՇԿԻ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

Վսեմ. կառավարիչ Մուսթաֆա փաշա ի պատէ, Սր. Առաջնորդը միայն կը ճանչնայ իբր օրինաւոր իշխանութիւն և հետևաբար պաշտօնապէս պիտի կանչէ զինքը հոս, հինգշաբթի առաւօտ:

2 հոկտեմբեր (գշ) Դպրոցական Յանձնախումբ
Աղեքսանդրիա

Վ/ճակիս Առաջնորդ Մկրտիչ Մ. Վ. Ա-
զաւնուենի երեք օրէ ի վեր հիւանդալով ան-
կողմնոյ կը ծառայէ. Լուսաբեր, 6 հօկա. շք:

Ազաւնուենի հայր սուրբ, չորեքշաբթի իրիկ-
ուան դէմ առաջնորդարանի սենեակը թի՛ կնաթու-
ռին մէջ ինկած, ձախ ու աջ ձեռքերը որովայ-
նին վրայ զարնելով կամացուկ կամացուկ, կը հե-
ծէ օ՛ֆ, օ՛ֆ, քա՛ր, քա՛ր:

Գուռը բացուելով, քարտուղար էֆէնտին
ներս կը մանէ. հայր սուրբը քղանցքները պոր-
տին վրայ կը քաշէ աճապաբանօք:

Քարտուղար էֆ.- Ի՞նչ ունիք, հայր սուրբ,
անհանգի՞ստ էք, ի՞նչ էք:

Հայր Սուրբը.- Ա՛խ, օրհնած, քա՛ր, քա՛ր:

Քարտուղար էֆ.- (քիժիժ աղով մը) Սուլթա-
նին հիւանդութի՞ւնը:

Հայր Սուրբը.- (տեղէն քիչ մը ելլելով, յար-
գանքի բնաբեր շարժմամբ) չէ՛, օրհնած չէ՛. ներ-
սիդիս քար է կտրեր, աս երեք օր է:

Քարտուղար էֆ.- Ինչո՞ւ հիւնեաաի մը չէք
առներ, հայր սուրբ:

Հայր Սուրբը.- Ի՞նչ գիտնամ. անոր համար
ալ բաներ մը կ'ըսեն. աղիքները կը բոլբոբէ ե-
ղեր: Չըլլայ նէ վաղն առտու կ'առնեմ: Ի՞նչ կայ
նայինք:

Քարտուղար էֆ.- Լուսաբերին լրաբերը ե-

կած է, վարչական սրտումներէն ս՞րը պիտի չտանք, կրնա՞ք ըսել:

Հայր Սուրբը.- (բարկացած) Տէ՛ֆ ըրէ՛, տէֆ. ես աս տեղս կը ճաթիմ կոր, անո՛նք իմ փորս չեն մամտար, զաղթանին կը մամտան. տէ՛ֆ ըրէ՛ տէֆ:

Քարտուղար էֆէնտին դուրս կ'ելլէ, բայց անմիջապէս ետ կը դառնայ, նամակ մը բերելով, բոթան եկած է: Հայր սուրբը նամակը կը բանայ, գոյնը կը նետէ, ձախ ձեռքը ծունկին զարնելով:

Քարտուղար էֆ.- Ի՞նչ կայ հայր սուրբ, գէշ լո՞ւր մը կայ:

Հայր Սուրբը.- Ի՞նչ գէշ, գէշի՞ն գէշը. հիմակ ալ դպրոցը կոխեր են:

Քարտուղար էֆ.- Որո՞նք կոխեր են, ս՞ր:

Հայր Սուրբը.- (նամակը երկնցնելով), նա՛ կարգա, զազէպները, ՚ զիպտտի տթերորդ պատուհասը անո՞նք են:

Քարտուղար էֆ.- Ինչ կ'ըլլայ հայր սուրբ, հոս բան մը չկայ ետ:

Հայր Սուրբը.- Չկայ ամա, ինձի անանկ կուգայ որ նորէն իմ գլուխս պիտի ցաւցնեն:

(Ո.յս միջոցիս դուռը նորէն կը բացուի, ժամկոչը կուգայ. հեռագիր մը եկած է:

Հայր Սուրբը (գոյ ելած), Վախնամ չար խապարը աս կը բերէ: (Հեռագիրը կը բանայ. ու

Քարտուղար էֆէնտին կ'երկնցնէ) . կարգա՛,
Թարգմանէ, չեմ հասկնար, ինչ է:

Քարտուղար էֆ. (կաշգայէ յետոյ, վարա-
նուժով մը), Հայր սուրբ Ազեքսանգրիոյ կառա-
վարութիւնը հրամանքնիդ կը հրաւիրէ հինգ-
շաբթի Ազեքսանգրիա իջնել, առ դպրոցական
խնդրին համար ձեր հետ պիտի բռնակցին:

Հայր Սուրբը.- (դող ելած) Ի՞նչ պիտի ը-
նեն, ի՞նչ պիտի ընեն եպեր:

Քարտուղար էֆ.- Հրամանքիդ հետ պիտի
բանակցին, իբր միակ օրինաւոր իշխանութեան
հետ:

Հայր Սուրբը.- (տեղէն ցատկելով, երկու
ձեռքերը փորին վրայ) Հողաթափնե՛րս, հողա-
թափնե՛րս, ա՛յ, ա՛յ: (Աճապարանքով դուրս կը
վազէ, տասը վայրկեանէն կը վերադառնայ) Ը-
ւացած ձեռքերը կը չորցնէ, և անկողնին վրայ
կ'իյնայ:

Քարտուղար էֆ.- Ի՞նչ եղաք հայր սուրբ
մէկէն ի մէկ:

Հայր Սուրբը.- Երեսդ վարդէ շուր, ապա-
վիժում մը ս՛ր: Ա՛խ: Նորէն կուռ կուռ կ'ընէ:
Կա...ղա...չեմ, դը...նա, սա... Լ ու ս ա բ եր ի ն
(ձեռքը փորին տանելով) ա՛յ, ա՛յ, սա Լուսաբե-
րին մարդը կանչէ:

Քարտուղար էֆէնտին դուրս կ'ելլէ. հայր
սուրբը այս միջոցիս անգամ մը եւս կ'երթայ եւ

ձեռքերը չօրցնելով, կուգայ անկողնին վրայ կ'երկրննայ: Քարտուղայրը և լրաբերը ներս կը մըսնեն:

Հայր Սուրբը.~ (նուազուն ձայնով), Տիգրան, օղլում, նա...արլ ես, ա...ղէկ ես, ս'ւֆ, ս'ւֆ. էֆէնտինները նասըլ են, ա...ղէկ են. աղուօր աղուօր Լու...սարեր կը հանէք... կօր... ապրիք. հա՛վատիս կ'ուզես կօր, դա...ւակս:

Լրաբերը.~ Հրամանեցէք, հայր սուրբ:

Հայր Սուրբը.~ Իշտէ՛ քեզի հավատիս, հալըս կը տեսնաս կօր. ս.ֆ ս.ֆ, աման՛ն աման՛ն, (ձեռքը փօրին տանելով): Գնա գրել տուր. հիւանդ եմ, հիւանդ: Թէ որ կընաք նէ, արաբերէն, գաղղիբէն թերթերուն ալ գրել տուէք. աղէկ կ'ըլլայ, վարը իմանան:

Հայր սուրբը քարտուղար էֆէնտին կը խնդրէ անդին սեղանին վրայ գտնուած կրօր ծրարը բերել. մէջէն երեք հատ նշխարք կը հանէ և պ. Տիգրանին կուտայ: Պ. Տիգրան ձեռքը համբուրելով դուրս ելած պահուն.

Հայր Սուրբը.~ Ապրի՛ս, օրհնած, ապրի՛ս. էֆէնտիններուն ալ օղջոյն կ'ընեմ: աղէկ գրել արուէք: Աս թիթի բան չէ, հոլաթափներս, հոլաթափներս. (չօրս կը ժպտէ, տասը վայրկեանէն կուգայ ձեռքերը չօրցնելով. աս անգամ թիկնաթառին մէջ կ'իյնայ, ձեռքերը ծանկերուն կը գալնէ, իրանին վերի մասը երեքցնէլով), ս'ւֆ,

ո՛ւֆ, ո՛ւֆ:

Քարտուղար էֆ.~ (քմծիծաղով), Հայր սուրբ
ալ հիւնեատիի պէտք պիտի չունենաք:

Հայր Սուրբը.~ Սա շիշէն անդին տար կա-
ղաչեմ:

Քարտուղար էֆ.~ Ո՞ր շիշէն, հայր սուրբ:

Հայր Սուրբը.~ Ամա՛ն, սա թուղթին կտո-
րը, թեղեկրա՞ֆ է ի՞նչ է, քանի տեսնամ նէ, ներ-
սիցիս կուռ կուռ կընէ կոր:

Քարտուղար էֆ.~ Հայր սուրբ, եթէ կ'ուզեք
բժիշկ մը բերենք. աօքթօր Քէշեան էֆէնտիին
իմաց տանք:

Հայր Սուրբը.~ Չէ՛, չէ՛, չեմ ուզեր, ան ի՞նչ
կրնայ ընել որ, ո՛ւֆ, ո՛ւֆ:

Քարտուղար էֆ.~ Չըլլայ նէ աօքթօր Մա-
խտիք հիաւիրենք.

Հայր Սուրբը.~ (խեղճուկ ձայնով մը), չէ՛,
զաւակս չէ՛, աս տեղի բժիշկները իմ հիւանդու-
թիւնս չեն հասկնար: Իմ բժիշկս Բարիզէն պիտի
դայ, աչքս ճամբան է ամէն օր, ան մինակ զիս
կրնայ ազատել. ա՛խ, իմ փաշա՛ հէքիմս: Հողա-
թափներս, հողաթափներս:

(Կը վազէ դուրս)

Ք.

ՍՌ ՁԵՌՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱԿԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ ՂԵՐԱԿԱԶՄԵԱՍԻՆ

- Պ ի ծ ա կը տեսա՞ր:
- Հա՛, տեսայ.
- Էյ ի՞նչ կ'ըսես:
- Ի՞նչ պիտի ըսեմ որ:
- Օ՛խ, վերջապէս հակայեղափոխական թերթ
ալ ունեցանք եա՛:
- Ո՞րն է,
- Ճանըմ Պ ի ծ ա կը չի տեսա՞ր:
- Էյ տեսայ, ըսինք եա՛:
- Չի կարգացի՞ր:
- Է՛յ, կարգացի՛. ետքը, օ՛ֆ:
- Մէկ ծայրէն միւսը հակայեղափոխական
չէ՞ մի:
- Աղբա՛ր, տասը անգամ կարգացի, մէջը
հակայեղափոխական բա՛ռ մը չտեսայ: Ո՛չ հով-
կասի արկածեւելներուն հանգանակութեան գը-
րամին ինչ եղած ըլլալը կը հարցնէ կը փնտռէ,
ո՛չ ալ Ձէյթունի Բարեսիրացին գրամը ի՞նչ ե-
ղաւը մտքէն կ'անցնէ. ուրեմն Պ ի ծ ա կը ինչ-
պէ՛ս հակայեղափոխական կը զրպարտէք:

Անցած շաբթուան Պօլոսեան վարժարանի
բացման և փակման ներկայացումը խիստ փայ-
լուն յաջողութիւն մը գտած ըլլալով, ըստ խնդ-

բանաց Ալեքսանդրիոյ հայ հասարակութեան ,
երկրորդ ներկայացում մըն ալ տրուեցաւ :

Այս երկրորդ ներկայացումը որ տեղի ու-
նեցաւ սեբեթ առտու, ժամը տասնին, առաջ-
նոյն չափ յաջող անցաւ :

Որոշեալ ժամուն Սմբատ Բիւրատ ուսուցիչ-
ներով և վարժուհիներով շրջապատուած դպրո-
ցը բացաւ, այս առթիւ յատկապէս բերուած քանի
մը տղաք և աղջկունք, աշակերտի և աշակեր-
տուհիի դեր կը կաաարէին խիստ բնական կեր-
պով :

Այն ատեն ըստ կանխապէս տրուած որոշ-
ման, դպրոցական Յանձնախմբի մէկ քանի ան-
դամները, աշակերտներու ծնողքները և Ալեք-
սանդրիոյ երիտասարդութեան ներկայացուցիչ-
ները հաւաքուեցան եկեղեցիին փակը : Կրկին
պատգամաւորութիւն մը ներկայացաւ Ս. Բիւ-
րատի և իր պաշտօնանկութիւնը պահանջեց,
Սմբատ Բիւրատ կրկին մերժեց : Պատգամաւոր-
ները կրկին ըսին թէ դպրոցը անպատճառ պի-
տի փակեն, Սմբատ Բիւրատ կրկին պատասխա-
նեց թէ կարող են փակել և կրկին Տ. Միհրան
Թեւեանի դիւանատունը նահանջեց : Այն ատեն
կրկին դասարաններուն դուռները կը պուեցան,
կրկին ուսուցիչներուն և տղայոց յայտարարուե-
ցաւ վերադառնալ տուն :

Ու բանալիները կրկին յանձնուեցան Տ. Մ.

Թեւեանի ուր կրկին խոստացաւ զանոնք պահել...
ու ներկայացուաւ վերջացաւ,

Ներկայացման վերջին մասը, այսինքն կա-
ռավարչատուն երթալու արարուածը, այս ան-
գամ յապագուած էր թէև, սակայն ասով հան-
դերձ պէտք է ըսել ուր խիստ յաջող անցաւ ա-
մէն բան:

Կը լսենք թէ, ըստ խնդրանաց հասարակու-
թեան, յառաջիկայ երկուշաբթի երրորդ ներկա-
յացում մըն ալ պիտի արուի:

Ներկայացումներուն աւելի փայլ մը տալու
համար արգեօք կարելի չէ՞ հրաւիրել Ա. Պէն-
լեանի խումբը ուր միջնարարներու ատեն «հովիւ
և հովուուհին», և «գայէ՛ք տեսէ՛ք գայլն է հ-
կեր հօ՛, ն երգէ. այս վերջինը բնազանաբար
Սասնոյ տարազով:

Ստացանք ՊԻԾԱԿ «հակայեղափոխական
թերթ», ին առաջին թիւը, պատասխանատու խմ-
բադրութեամբ Տ. Սիտակ Մուրստեանի: Տ. Սի-
տակ Մուրստեանը կը ճանչնանք երկար ատենէ
ի վեր, կատաղի բայց անվնաս «հակամէնբան-
եան», մըն է. բաներ մը ըսել կ'ուզէ, բայց մէ-
ջէն չկրնար ելլել. այս է իր գլխաւոր թերու-
թիւնը:


Ծայրէ ծայր համբերութեամբ կարգացինք
«Պիծակ»,ը բաւական ինքացինք շարադրութեան

ձեւին, յայտնուած գաղափարներուն, արձակուած խենթ ու խելառ վճիռներուն վրայ:

Տ. Սիսակ Մուրատեան իր կամքէն անկախ պատճառներով զաւելջտարան մըն է, նա՛ մանաւանդ երբ խիստ յուրջ կերպով կը գրէ:

Պիճակ մեզ խնդացուց, ուրեմն կը ներքնը իրեն. միայն թէ կատակը պէտք չէ որ կը կնուի, որպէսզի համով ըլլայ:

Ուրեմն ողջո՛յն մեր հակապաշտօնակից հակաՄուրատեանի:



ՄԻՔԷԻ ՍԻՐԱՐԿԱԾԸ (2)



(Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն Վ Ի Պ Ա Կ)

Ա.

(Շար. 21րդ թիւէն)

Երեք բարեկամներուն միջև պահ մը լուռ թիւն տիրէ: Խմբագիրը՝ Տիրան ճշմարտապէս յուզուած կ'ըրևար իր բարեկամին պատահած դժբախտութենէն և խոր մտածումի մէջ ընկղմած էր: Իրողութիւնը սակայն այն էր որ յանկարծ շարձճի գաղափար մը ծընած էր մաքէն մէջ. «Արդեօք կարելի չէր Միքէի կացութիւնը շահագործել:»

Շատ ժամանակ չ'որոնցուց միջոցը հնարելու համար: Մէկէն ի մէկ ձևաքը սեղանին զարկաւ և գոչեւ:

- Միքէ, պէտք է վրէժ լուծես...

Վրէժխնդրութեան ցփնէ ուրուականը արդէն սիւր-
սած էր յամրաքայլ ներս մտնել Միքէի խելսպատա-
կէն: Տիրանի խօսքին վրայ ուրուականը երկու քայլ
յառաջացաւ:

- Այն, վրէժ, մրմոսայ Միքէ, վրէժ, բայց ինչպէս,
որմէ...:

- Հիմա կ'որոշենք, վճանց Տիրան, դուն երեք գա-
ւաթ գաբւջուր եւ ապսպրէ նայինք:

Հրամանը դործադրուեցաւ:

- Վրէժը պէտք է լուծել, շարունակեց խմբագիրը,
Սարգիս էֆէնտիէն. աղջիկէ մը վրէժ լուծել ասպիտա-
կան ողիի հակառակ է, ասկէ զատ Սրբունի յանցանք
չունի, ինք զո՞ մըն է, մեր ապէտ բարբերուն եւ մեր
սխալ ըմբռնումներուն մէկ անմեղ զոհը. յարգանքով
խոնարհինք իր առջև եւ իր կենացը պարպենք այս գա-
ւաթները:

Եւ Տիրան խօսքը գործքին միացնելով ու գաւա-
թն ալ իր շրթունքներուն, ի մի ումպ կուլ տուաւ
պարունակեալը:

- Այն, մէջ մտաւ Մարտիկ, ինքն ալ խօսակցու-
թեան մասնակցելով, վրէժդ պէտք է Սարգիս էֆէն-
տիէն լուծես:

- Լնւ, բայց ինչպէս, հարցուց խեղճ Միքէ յու-
սահատարար:

- Հիմակ միջոցը վնտունք, ըսաւ Տիրան որ ար-
դէն իր ծրագիրը պատրաստած էր, բայց որպէսզի չու-
տով գտնենք սա կառուծը կանչէ եւ գաւաթները լեց-
նել տուր, ինծի ալ սիկառէթ մը անցնուր, որովհետեւ
միշտ զիտած եմ որ վրէժխնդրական միջոցներու գիւ-
տը հէֆանալի կերպով դիւրին կը յաջողի ծխելով:

- Գտայ գոչեց Միքէ, դողահար ձայնով մը, բէ-
վովէր մը կ'առնեմ, կ'երթամ Սարգիս էֆէնտիի գրա-

անհետախն առջի կը սպասեմ ե զուրս ելած ատենը պնւմ, պնւմ, պնւմ, կը սպաննեմ:

- Վսեմ, բայց վտանգաւոր, վճռեց Տիրան, անմիջական ձերբակալութիւն, հարցաքննութիւն, բանտարկութիւն, զատաստան ե առնուազն տասնընէինգ աւարի տաժանակիր աշխատութիւն ե զուէ վերքերն ալ մահացու չեն ըլլար, Սարգիս էֆէնտի քսնի մը ամիս անկողին պառկելէ ետքը կ'առողջանայ ու զուն պարագ պեղը էջնահատակ կ'ըլլաս... չէ, չէ, արիչ բան մտածենք:

- Այո, այո, ուրիշ բան մտածենք կրկնեց Սարտիկ:

- Անշուշտ պիտի մտածենք, ըսաւ Տիրան, միայն թէ գարեջուրը հատաւ ե սիկառէթս լմնցաւ:

Վերանորոգուեցան մտածման յատուկ դործիքները:

- Գտնայ, գոչեց կրկին Միքէ, հարսնիքին օրը անշուշտ իս ալ պիտի հրաւիրեն, սե լաթերս հագած կ'երթամ, ուրախ զուարթ ամենուն հետ կը ածնուիմ ու պսակի սրարողութեան միջոցին՝ յանկարծ՝ դանակ մը հանելով սիրտս կը իօթեմ ու Արքունիին սօքերուն առջի կ'իյնամ, անոր հարսանեկան ճերմակ զղեստները կարմիր արիւնովս ներկելով...:

- Վիպական, շափազանց վիպական, պատասխանեց Տիրան, գոնթէ թատերական, մելոտրամիք... ու յետոյ, մօտան անչաժ է, հիմակ բեմին վրայ ալ այդ տեսակ տեսարաններ ընդունելութիւն չեն գտներ կոր... ասկէ զատ, ինչպէս վրէժ լուծած կ'ըլլաս Սարգիս էֆէնտիէն, այլքան զգայուն մարդ մը կը կարծես զինքը որ ատանկ պէտքէ մը զգածուի. արիւնաթաթաւ գետին ինչո՞ւմ ատենդ, անիկա դող ելած պիտի գոչէ. «Վախ, կիւզելիմ իսալլն ազատեց, հարսին Փիստաւնը

վարայի մը ըրտու» Ահա բովանդակ արդիւնքը քու հերոսական արարքիդ: Ուրիշ բան մտածենք...

- Այն, ուրիշ բան մտածենք, կրկնեց Մարտիկ որ չէր կրնար գուշակել թէ Տիրան ուր պիտի կապէր այս վրէժինդութեան գործը:

- Այնպիսի միջոց մը պէտք է գտնել որ վրէժինդութիւնը սոսկալի ըլլայ, առանց սակայն մէջը թոյն, գանակ, բէվովքը գտնուելու. «Մի սպանանէք», կ'ըսէ Յիսուս, «Որ սուր առնէ սրով սնկիցի» կը շարունակէ նոյն այդ Յիսուսը և իրաւունք ունի:

Այսպէս պատասխանեց Տիրան որ իր մտածած հնարքը երևան հանելու վայրկեանը հասած կը նկատէր:

(Շարունակելի)

II. Զ Դ

Հայ տոմարակալ մը որ երկար տարիներ Կ. Պօլիս Ռէժիի վարչութեան մէջ պաշտօն վարած է և իր բարեւոք պաշտօնավարութեան վկայադրերն ալ ունի ևւ չորս տարի ևս Վերին Եգիպտոսի մէջ ծանօթ առևտրական տան մը քով իրրի հաշուակալ ծառայած է, այժմ պատրաստ է իրրի այցելու կամ մնայուն պաշտօնեայ ծառայել վաճառական տան մը մէջ: Կարող է նաև վարել արկղակալի պաշտօն և առ այդ հարկ եղած երաշխաւորութիւնները տալ: Գաւառներու մէջ ևս պաշտօն կը ստանձնէ, եթէ պայմանները յարմարին: Դիմել «Ազատ Խօսք»ի հասցէին:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻԻԹՈՌԻԱ ՕԹԷԼ Աղեքսանդրոյ Մօս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՁ ԲՍՅՈՒԱՅ Հալթ Թիւ 2

Առաջին կարգի օթել, մանաւորապէս շինուած, այժմու ըստ հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մանաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտրական լոյս: ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ: Թեղեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոամվայով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌէՂիկ, ՏեՕՐԷՆ

Յ. Գ.-Մանաւոր դին կառավարական պաշտօնականերու և զինուորականներու համար: Բոլոր սեն-նակները ծովուն վրայ կը նային:

ՍԵՆ ԱՅՄՍԱՆՈՅ
ՕՆՍԳՐԱՆ ԵՒ ՏՄԱԳՐԱՆ ԱԵԱՏԻՓԵԱՆ

Գ. ՆԱԼԱՐԷՔԻԱՆ

1910 03 02

Հասցի և ճիշտ կոչումը: Աղեքսանդրիա, Նիւ.

15 RUE STAMBOUL IS

ALEXANDRIE

Այս ախտանշանը չի կր պարտաւորել զոքրեւել և կրկէլ զուրկ ըլլալու: Բաւշուկ, Գլխիկ, Փոքրակ նիւթեր, արծաթ և սիւրճ սեւեղաններ, թանկանքեր են: Ձեռնկերպիչ և կաշմազոյց-թիւի վարտերու զարդեր:

Տարտական ամէն տեսակ զարդեր նայ և շատ անգամ շատ: Զարտական իրախաղարներ, այլաբարտեր, ճամկազոյց-թիւի, սուսաղարներ, ճաշիկաբարտեր, ճամկազոյց, նայեմ-դրոյիներ, զիջեր են: Մանաւոր ընտել ճաշիկ և ճարտիկանու մասքար զին:

Այս ախտանշանը զերտպէս կը յանձնարարելը Աղեքսանդրիոյ, Գալիլի և թուրք եղիպտոսոյ այլ տունոց, վասն զի յիշել են կամ թուրք յանձնարարութիւնները ամենամեծ իմաստով կը կատարուին և զոք կը կրկն ամեն զմարտան ճաշ, յանկերը:

Շատ գործաւորներու զիմեք առողջ հանկերը անկամ զք այլեղ այն ախտանշանը:

«ՍՉՍՏ ԽՕՍԻ» ՉԵՌԻԿԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աղեքսանդրիա՝ Տ. Յ.


Ղազիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ.

Թեղլիանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ
Տ. Հունկի և Կոլտըն Բէօշ-

քի քով եւ «Վուսարեր»
թերթի գրուիչին մօտ:

Նախորդ շարթուան
թիւերը կը վաճառուին
կրկին զինով:



“ԱՋԱՏ ԽՕՄՔ”-ի Պայմանները

— ԱՋԱՏ ԽՕՄՔ - 40 ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՄԲԱՐ ՕՔԵՐԸ

Եզրագծի համար բաժնեկիցն է

40 ՔԻՆԸ	40 ՂՐԸ ՈՂԶ
20 „	20 „ „

Ա Ր Տ Ա Ս Ա Ղ Մ Ա Ն

ԵՒՐՈՍԱ	40	ՅԻՒ	10	ՏՐԱԿ
ՌՈՒՍԻ	„	„	4	ՐՈՒՍԼԻ
ԱՍԵՐԻՎԱ	„	„	2	ՏՈՒՍԻ

Բաժանորդագրուելուք կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԸ . ՈՂԶ

“ԱՋԱՏ ԽՕՄՔ”-ի համար բաժնեկիցին կամ
որ և է գրուելին պէտք է ուղղել հե-
տևեալ հասցեին՝

Կ. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE

Մանուգրովներ կրկնգրուելի մասնաւոր
պայմաններով:

Պատասխանաւոր խմբագիր **Ե. ՕՏԵՂԸ**

Տպար. Թարգ. Կ. ՆԱԶԱՐԵԿԻԱՆ Արեւանի թիւ